

DOI: 10.59560/18291155-2025.4-175

ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ

Հայ-ռուսական համալսարանի
Իրավունքի ինստիտուտ,
իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի
ամբիոնի դասախոս

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ (ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ) ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ամփոփագիր

Ուսումնասիրության նպատակն Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդների տարբերակման համատեքստում հստակ ձևակերպված չափանիշների հիման վրա հնարավոր մոդելավորման՝ դասակարգման, բացահայտումը, ներկայացումն ու հիմնավորումն է: Օրինակ, Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդները դասակարգել ըստ վերջինիս բնույթի, նախագահողի, կազմի, ձևավորման կարգի, կամ այլ չափանիշների հիման վրա՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ո՛չ տեսությունը և ո՛չ էլ պրակտիկան չունեն հստակ մոտեցումներ, թե դասակարգման ինչ չափանիշներ են անհրաժեշտ: Հետևաբար, անհրաժեշտություն առաջացավ հետազոտությունն իրականացնել հատկապես իրավահամեմատական մեթոդով, քանի որ անհրաժեշտ է բացահայտել, թե ինչպես են կազմավորվում, ինչ կարգավիճակ և կազմ ունեն Անվտանգության խորհուրդները:

Հիմնաբառեր. Ազգային անվտանգության խորհուրդ, Անվտանգության խորհուրդ, մոդել, ազգային անվտանգություն, Գերագույն հրամանատար, Գլխավոր հրամանատար, ազգային անվտանգության տեսություն:

Հատկանշական է, որ սահմանադրական իրավունքի տեսությունում, օրինակ, տարբերակել ենք սահմանադրական արդարադատության անգլո-սաքսոնական, կոնտինենտալ և խառը մոդելներ՝ առանձնացված մասնագիտացված սահմանադրական արդարադատություն իրականացնող ինստիտուտի առկայությամբ, բացակայությամբ, սահմանադրաիրավական կարգավիճակով, իրավասության առանձնահատկություններով և այլն: Սակայն, այս համատեքստում առկա չեն այն

օբյեկտիվ չափանիշները, ըստ որոնց կարող ենք դասակարգել Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդները ևս:

Մի կողմից՝ ուսումնասիրելով Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի (այսուհետ՝ **Խորհուրդ**) անգլո-սաքսոնական, իսկ մյուս կողմից՝ ռոմանագերմանական իրավական ընտանիքներում առկա տարբերակները՝ անհրաժեշտություն է առաջանում հստակ մոդելների դասակարգել Խորհուրդները՝ հստակ չափանիշներով մոդելավորելով:

Սահմանադրական իրավունքի տեսությունում, ինչպես նաև պետականագիտությունում չկա Խորհրդի տարբեր հիմքերով հստակ դասակարգման մոտեցում. ըստ էության, յուրքանչյուր պետություն ինքն է որոշում Խորհրդի բնույթը, կազմը, կառուցվածքը, գործառույթների շրջանակը և այլն: Օբյեկտիվ իրականությունում ընդունված միասնական մոտեցում չկա. անգամ պետության կառավարման միևնույն ձևի պարագայում են դրանք խիստ տարբեր: Օրինակ, խորհրդարանական կառավարման հայկական ձևում Անվտանգության խորհուրդը նախագահում է Հանրապետության վարչապետը, իսկ Լատվիայում՝ նախագահը, Հայաստանի Անվտանգության խորհուրդը կազմված է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներից, մինչդեռ լատվիական փորձը Ազգային անվտանգության խորհրդի կազմում նախատեսում է նաև խորհրդարանականների ներառումը:

Տարբեր պետություններում Խորհրդի բնույթը տարբեր է ներկայացվում: Ըստ այդմ՝ գործունեության պրոակտիվության համատեքստում Անվտանգության խորհուրդները կարող ենք բաժանել հետևյալ խմբերի՝

ա) **խորհրդակցական** և բ) **կատարողական:**

Հիշյալ համատեքստում, Խորհուրդը բնույթով խորհրդակցական է, երբ վերջինս ազգային անվտանգության բնագավառում որոշումներ կայացնելու նպատակով Գլխավոր հրամանատարին (**Commander-in-Chief**) է ներկայացնում համապատասխան առաջարկություններ և կարծիքներ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհուրդը ներկայացվում է հենց այսպիսին՝ *«Ռուսաստանի Դաշնության Անվտանգության խորհուրդը սահմանադրական խորհրդակցական մարմինն է, որը (...)[1],»*, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների Ազգային անվտանգության խորհուրդը:

Խորհուրդը համարվում է կատարողական, երբ այն ձևավորվել է ազգային անվտանգության բնագավառում Գլխավոր հրամանատարի կայացրած որոշումները կատարելու, իրականացնելու, ինչպես նաև ազգային անվտանգության բնագավառում գործունեություն ծավալող մարմինների աշխատանքը համակարգելու նպատակով: Օրինակ՝ Բելառուսի Հանրապետություն, Ղրղզստանի Հանրապետություն և այլն:

[1] *Федеральный закон от 28.12.2010 N 390-ФЗ (ред. от 10.07.2023) "О безопасности", ч. 1 ст. 13, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_108546/1e75c54a69d0c1a0b6b304ca2c5d51e4c7eaf3f7/ [30/11/2025]:*

Ինչպես նշել էինք՝ կառավարման միևնույն ձև ունեցող պետություններում անգամ Խորհուրդներն ունեն իրարից խիստ տարբերվող բնույթ, կարգավիճակ, ընդհուպ նախագահող տարբեր սուբյեկտներ:

Այսպես, կախված պետության կառավարման համակարգի առանձնահատկություններից՝ Խորհրդի նախագահ կարող է հանդես գալ ինչպես Հանրապետության նախագահը, այնպես էլ կառավարության ղեկավարը: Նախագահական և խառը կառավարման համակարգերում ամեն բան հստակ է, քանի որ Խորհուրդը նախագահում է Հանրապետության գլուխը՝ նախագահը:

Այսպես, նախագահական կառավարման համակարգի պետություններում, ինչպիսիք են՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները[1], Բրազիլիայի Դաշնային Հանրապետությունը[2] և այլն, Խորհուրդը նախագահում է Հանրապետության Նախագահը:

Խառը կառավարման համակարգի պետություններում՝ Ռուսաստանի Դաշնություն[3], Ֆրանսիական Հանրապետություն[4], Բելառուսի Հանրապետություն[5] և այլն, Խորհուրդը ևս նախագահում է Հանրապետության Նախագահը:

Խորհրդարանականում չկա մեկ միասնական մոտեցում և յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում, թե ի վերջո ով պետք է նախագահի Խորհուրդը:

Որպես խորհրդարանական կառավարման ձևի պետություն՝ սույն հետազոտության համատեքստում անհրաժեշտ ենք համարում քննարկել հետևյալը:

Այսպես, Լատվիայի Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը (ընտրված Սայեմայի՝ Խորհրդարանի, կողմից[6]) պետության Զինված ուժերի Գլխավոր հրամանատարն է **(անգլ.՝ Commander-in-Chief),** որը պատերազմի ընթացքում նշանակում է Գերագույն հրամանատարին **(անգլ.՝ Supreme Commander)[7]:**

Որպեսզի հասկանանք, թե այս երկու եզրույթներն ինչ տարբերություն ունեն, անհրաժեշտ է քննարկել վերջիններիս բացատրությունները: Այսպես.

Commander-in-Chief՝ Գլխավոր հրամանատար, եզրույթը անգլերեն բացատրական բառարանները հետևյալ կերպ են ներկայացնում.

---

[1] *National Security Act of United States of America, 1947, https://govtrackus.s3.amazonaws.com/legislink/pdf/stat/61/STATUTE-61-Pg495.pdf [30/11/2025]:*

[2] *Conselho de Defesa Nacional, https://www.gov.br/gsi/pt-br/assuntos/seguranca-institucional/conselho-de-defesa-nacional? [30/11/2025]:*

[3] *Конституция Российской Федерации, п. ж) ст. 83 http://www.constitution.ru/10003000/10003000-6.htm [30/11/2025]:*

[4] *La Constitution De La Cinquième République, Article 15, https://www.elysee.fr/en/french-presidency/constitution-of-4-october-1958 [30/11/2025]:*

[5] *Конституция Республики Беларусь, ч. 27 ст. 84 https://www.refworld.org/legal/legislation/natlegbod/1994/en/109355 [30/11/2025]:*

[6] *Տե՛ս Լատվիայի Սահմանադրության 35 և 36-րդ հոդվածները, https://www.saeima.lv/en/legislative-process/constitution [30/11/2025]:*

[7] *Տե՛ս Լատվիայի Սահմանադրության 42-րդ հոդվածը, https://www.saeima.lv/en/legislative-process/constitution [30/11/2025]:*

ա) երկրի բոլոր զինված ուժերի կամ որոշակի տարածքում կամ (հստակ, **ՀՍ**) գործողության ընթացքում կռվող բոլոր ուժերի հրամանատար[1].

բ) գլխավոր պաշտոնյա, որը պատասխանատու է որոշակի տարածքում առկա բոլոր ուժերի (ղեկավարման, **ՀՍ**) համար[2].

գ) «Գլխավոր հրամանատար» եզրույթը վերաբերում է երկրի զինված ուժերի ամենաբարձրաստիճան պաշտոնյային, որը սովորաբար պետության կամ կառավարության ղեկավարն է, ինչպիսին է Միացյալ Նահանգների նախագահը[3]:

Supreme Commander՝ Գերագույն հրամանատար, եզրույթը անգլերեն բացատրական բառարանները հետևյալ կերպ են ներկայացնում.

ա) ռազմական գործողության ղեկավար **սպա** կամ որոշակի կոչում ունեցող զինվորական[4].

բ) հրամանատար, որը կատարում է զինված ուժերի ընդհանուր ղեկավարումը ռազմական մեկ գործողության կամ սպառնալիքի (դեպքում, **ՀՍ**)[5]:

Նախ՝ անհրաժեշտ է հասկանալ, որ վկայակոչված եզրույթները ծավալային առումով իրարից խիստ տարբեր են, իսկ Commander-in-Chief եզրույթը մեր իրականությունում առավելապես ընկալվում է որպես **Գերագույն գլխավոր հրամանատար[6]:** Միջազգային փորձի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ վերջինս ոչ այդքան կոռեկտ թարգմանության հետևանք է:

Երկրորդ՝ Commander-in-Chief՝ Գլխավոր հրամանատար, քաղաքացիական պաշտոնատար անձ է, որը, որպես կանոն, պետության գլուխն է: Որպես բացառություն կարող է լինել կառավարության ղեկավարը: Մինչդեռ, Supreme Commander՝ Գերագույն հրամանատար, ռազմական բարձրագույն պաշտոնատար անձ է՝ զինվորական հրամանատար:

Երրորդ՝ Commander-in-Chief՝ Գլխավոր հրամանատար, «տիտղոսը», որպես կանոն, տրվում է քաղաքացիական բարձրագույն պաշտոնատար անձին՝ իր պաշտոնավարման ողջ ընթացքում: Մինչդեռ Supreme Commander՝ Գերագույն

---

[1] *Commander-in-Chif եզրույթի բացատրությունը, Cambridge Dictionary: Cambridge University Press & Assessment,*
https://dictionary.cambridge.org/dictionary/english/commander-in-chief [30/11/2025]:

[2] *Commander-in-Chif եզրույթի բացատրությունը, Collins English Dictionary,*
https://www.collinsdictionary.com/dictionary/english/commander-in-chief [30/11/2025]:

[3] *Commander-in-Chief եզրույթի բացատրությունը,*
https://www.ebsco.com/research-starters/political-science/commander-chief [30/11/2025]:

[4] *Supreme Commander եզրույթի բացատրությունը, Cambridge Dictonary: Cambridge University Press & Assessment,*
https://dictionary.cambridge.org/example/english/supreme-commander [30/11/2025]:

[5] *Supreme Commander եզրույթի բացատրությունը, Collins English Dictionary,*
https://www.collinsdictionary.com/dictionary/english/supreme-commander [30/11/2025]:

[6] *Հատկանշական է այն հանգամանքը, որ 1995 թվականին ընդունված և 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է հենց **Գերագույն գլխավոր հրամանատար** տիտղոսը, որը հանդիսանում է խորհրդային և ապա նաև ռուսական **Верховный главнокомандующий** եզրույթի թարգմանությունը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունում Գերագույն գլխավոր հրամանատար եզրույթը փոխարինվեց համեմատաբար ընդունելի թարգմանությամբ՝ Գերագույն հրամանատար (Հրանտ Սարկիսով):*

հրամանատար, «տիտղոսը»՝ որոշակի ժամանակով, ինչպես նաև կոնկրետ դեպքերում վերապահվում է զինվորական հիերարխիայում բարձրագույն հրամանատարին[1]:

Քննարկվող համատեքստում կարևոր ենք համարում վկայակոչել լատվիական փորձը.

Լատվիայի «Ազգային անվտանգության մասին» օրենքի **12-րդ բաժնի 2-րդ մասի** համաձայն՝

«Գերագույն հրամանատարն իրականացնում է պետական պաշտպանությունը՝ կանխելու համար պետության անկախությանը, նրա սահմանադրական կառուցվածքին և տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգը, եթե կաբինետը ուշացնի սույն օրենքով կամ այլ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված առաջադրանքների կատարումը»[2]:

Վերլուծելով Լատվիայի Սահմանադրությունը և «Ազգային անվտանգության մասին» օրենքի համապատասխան դրույթները՝ պարզ է դառնում, որ Գերագույն հրամանատարը բացառապես պատերազմական ժամանակաշրջանում նշանակվող բարձրագույն զինվորական է, որն, ի թիվս այլնի, պետք է ապահովի պետության տարածքային ամբողջականությունը:

Համակարգային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է նաև Միացյալ շտաբի հրամանատարի հաստիքը՝ Լատվիայի Ազգային զինված ուժերի ղեկավարը **(անգլ.՝ The Commander of the Joint Headquarters is Chief of the Latvian National Armed Force[3]),** որը համարժեք է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբի պետին: Միացյալ շտաբի հրամանատարն իրականացնում է Զինված ուժերի կառավարումը, սակայն արդեն խաղաղ ժամանակ: Ստացվում է, որ պատերազմի ժամանակ Զինված ուժերի Գլխավոր հրամանատարը՝ Հանրապետության նախագահը, նշանակում է իր Գերագույն հրամանատարին՝ արհեստավարժ զինվորականին, որը պարտավոր է նախագահի անունից կառավարել և ղեկավարել զինված ուժերը:

Լատվիայում, փաստացի, հատկապես պատերազմական և ռազմական իրադրությունում, Զինված ուժերի կառավարման համակարգում առկա է Գլխավոր հրամանատար՝ Հանրապետության նախագահը՝ ընտրված պետական, քաղաքական, քաղաքացիական բարձրագույն պաշտոնատար անձ, որը ղեկավարում և վերահսկում է Զինված ուժերը, կայացնում որոշումներ ազգային

---

[1] *Քննարկվող համատեքստում ցանկանում ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ վարչապետին վերապահվող **գերագույն հրամանատար** տիտղոսը չի տեղավորվում Commander-in-Chif և Supreme Commander եզրույթների տրամաբանության մեջ: Հանրապետության վարչապետը կարող էր լինել բացառապես Գլխավոր հրամանատար՝ Commander-in-Chif, սակայն ոչ՝ Գերագույն հրամանատար՝ Supreme Commander:*

[2] *Լատվիայի «Ազգային անվտանգության մասին» օրենք (ընդունված՝ 14 դեկտեմբերի 2000 թվականին), https://likumi.lv/ta/en/en/id/14011 [13/6/2025]:*

[3] *«Ազգային զինված ուժերի մասին» օրենքի 3-րդ գլխի 13-րդ բաժնի 1-ին մաս, https://likumi.lv/ta/en/en/id/15836 [15.06.2025]:*

պաշտպանության համապետական քաղաքականության վերաբերյալ և այլն[1], մինչդեռ Գերագույն հրամանատարը կոնկրետ ռազմական խնդրի հանգուցալուծման նպատակով նշանակված թիվ մեկ ռազմական պաշտոնատար անձ է, որը ստանձնում է Զինված ուժերի հրամանատարությունը բացառապես պատերազմական կամ կոնկրետ ռազմական խնդրի հանգուցալուծման ընթացքում: Մինչ Հանրապետության նախագահն ի պաշտոնե սահմանում է ռազմաքաղաքական նպատակները, Գերագույն հրամանատարն ապահովում է վերջիններիս իրականացումը՝ ղեկավարելով ռազմական գործողությունները, ինչպես նաև վերահսկողություն սահմանելով Զինված ուժերի պատրաստվածության, մարտունակության և կարողունակության նկատմամբ:

«Ազգային անվտանգության խորհրդի մասին» Լատվիայի օրենքի **8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի** համաձայն՝ Ազգային անվտանգության խորհուրդը[2] նախագահում է Հանրապետության նախագահը:

Ստացվում է, որ Լատվիայում՝ խորհրդարանական կառավարման համակարգի պետությունում, Հանրապետության նախագահը հանդես է գալիս որպես Ազգային անվտանգության խորհրդի նախագահ՝ վերջինից բխող լայն լիազորություններով: Վկայակոչված օրենքի **19-րդ հոդվածի** համաձայն՝ Լատվիայի Ազգային անվտանգության խորհուրդը ներառում է.

«Պետության Նախագահ, Սայեմայի խոսնակ, Սայեմայի Ազգային անվտանգության հանձնաժողովի, Սայեմայի Պաշտպանության, ներքին գործերի և կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահներ, Վարչապետ, Պաշտպանության, Արտաքին գործերի, Ներքին գործերի նախարարներ»[3]:

Լատվիական Օրենսդիրն Ազգային անվտանգության խորհրդի շատ ավելի լայն կազմ է նախատեսել, քան խորհրդարանական կառավարման համակարգի այլ պետություններ:

Հաշվի առնելով խորհրդարանական կառավարման համակարգի նրբությունները, ինչպես նաև հիմք ընդունելով պետական իշխանության թևերի հակակշիռների և փոխզսպումների բարձրագույն սկզբունքը՝ լատվիական Օրենսդիրը Պետության գլխին է վերապահել Ազգային անվտանգության խորհրդի նախագահությունը, Զինված ուժերի գլխավորումը և այլն. խորհրդարանական կառավարման մոդելը և նախագահի, այսպես կոչված, նեղ լիազորությունները դեռևս հիմք չեն կարող հանդիսանալ վերջինիս լիազորություններն է՛լ ավելի «սեղմելու» և այլ բարձրագույն պաշտոնատար անձի կամքից առկախելու համար:

Իտալիայի Պաշտպանության գերագույն խորհուրդը (անգլ.՝ **Supreme Defence Council of Italy):**

---

[1] *Լատվիայի Հանրապետության նախագահի պարտականությունները, իրավունքներն ու լիազորությունները,* https://www.president.lv/en/duties-powers-and-rights-president-latvia?utm_source= *[30/11/2025]:*

[2] *Լատվիայի «Ազգային անվտանգության մասին» օրենք (ընդունված՝ 14 դեկտեմբերի 2000 թվականին),* https://likumi.lv/ta/id/14011-nacionalas-drosibas-likums *[30/11/2025]:*

[3] *Լատվիայի «Ազգային անվտանգության մասին» օրենք (ընդունված՝ 14 դեկտեմբերի 2000 թվականին),* https://likumi.lv/ta/id/14011-nacionalas-drosibas-likums *[30/11/2025]:*

Իտալիայի Սահմանադրության **87-րդ հոդվածի 4-րդ պարբերության** համաձայն՝

*«Նախագահը Զինված ուժերի Գլխավոր հրամանատարն է **(անգլ.՝ Commander-in-Chief)**, նախագահում է օրենքով ստեղծված Պաշտպանության գերագույն խորհուրդը **(անգլ.՝ Supreme Defence Council)** և Խորհրդարանի համաձայնությամբ պատերազմի մասին հայտարարություններ անում»*[1]:

Ինչպես տեսնում ենք վկայակոչված նորմից, իտալական Սահմանադիրը միևնույն հարթությունում է դիտարկում Զինված ուժերի Գլխավոր հրամանատարի տիտղոսը և Պաշտպանության գերագույն խորհրդի՝ Խորհրդի, նախագահությունը:

Իտալիայի «Զինվորական կանոնակարգի օրենսգրքի» **(անգլ.՝ Code of military regulations, Legislative Decree 15 March 2010, n. 66) 3-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝

«Խորհուրդը նախագահում է Հանրապետության Նախագահը և կազմված է.

ա)Նախարարների խորհրդի նախագահից՝ փոխնախագահի գործառույթներով, բ) արտաքին գործերի նախարարից, գ) ներքին գործերի նախարարից, դ) էկոնոմիկայի և ֆինանսների նախարարից, ե) պաշտպանության նախարարից, զ) տնտեսական զարգացման նախարարից, է) պաշտպանության շտաբի պետից»[2]:

Իտալական Օրենսդիրը որդեգրել է շատ հետաքրքիր մոտեցում. խորհրդարանական կառավարման համակարգում Հանրապետության նախագահը պետության գլուխն է, իսկ նախարարների խորհրդի նախագահը **(վարչապետը)՝** լայն լիազորություններով կառավարության ղեկավարը, որոնք ազգային անվտանգության բնագավառի կարգավորման համատեքստում ստանձնել են սահմանադրական լրջագույն պարտականություններ՝ մեկտեղել է արտաքին հարաբերությունների և ազգային անվտանգության բնագավառները կարգավորող Խորհրդում, սակայն նախագահությունը վերապահել է Հանրապետության նախագահին, իսկ նախարարների խորհրդի նախագահին վերապահել է Պաշտպանության գերագույն խորհրդի փոխնախագահի գործառույթներ:

Որպես խորհրդարանական կառավարման համակարգի պետություն, որն ունի իր առանձնահատկությունները՝ կարևոր ենք համարում դիտարկել նաև Մոլդովայի Հանրապետության փորձը[3]:

Մոլդովայի Հանրապետության Սահմանադրության՝ **«(Հանրապետության Նախագահի) լիազորություններն ազգային պաշտպանության բնագավառում» վերտառությամբ** 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

---

[1] *Իտալիայի «Զինվորական կանոնակարգի օրենսգիրք» (ընդունված՝ 27 դեկտեմբերի 1947 թվականի),*
https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione_inglese.pdf [13/6/2025]:

[2] *Իտալիայի «Զինվորական կանոնակարգի օրենսգիրք» (ընդունված՝ 27 դեկտեմբերի 1947 թվականին), https://leg16.camera.it/522?l+Codici+della+difesa=&tema=225&utm_source [13/6/2025]:*

[3] *Քննարկվող համատեքստում կարևոր է արձանագրել, որ Մոլդովայի Հանրապետության Նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից ուղղակի քվեարկության միջոցով: Տե՛ս Մոլոդովայի Հանրապետության Սահմանադրության 78-րդ հոդվածի 1-ին մասը:*

«Մոլդովայի Հանրապետության Նախագահը զինված ուժերի Գլխավոր հրամանատարն է»:

Չնայած այն հանգամանքին, որ Մոլդովան ևս խորհրդարանական կառավարման համակարգի պետություն է, Հանրապետության Նախագահին է վերապահված Զինված ուժերի Գլխավոր հրամանատարի տիտղոսը:

2025 թվականի նոյեմբերի 7-ին Մոլդովայի Հանրապետության Նախագահը հաստատել է թիվ 428-X (Nr.428-X.) դեկրետը[1] (այսուհետ՝ **դեկրետ**): Դեկրետի համաձայն լուծարվել է նախկինում գործող Անվտանգության գերագույն խորհուրդը և հիմնվել Ազգային անվտանգության խորհուրդ: Դեկրետի 1-ին հոդվածի համաձայն՝ Ազգային անվտանգության խորհուրդը նախագահում է Հանրապետության Նախագահը:

Ինչպես տեսնում ենք քննարկվող օրինակներից, չկա միասնական մոտեցում, թե ի վերջո ով պետք է նախագահի Խորհրդում՝ պետության գլո՞ւխը, թե՞ գործադիր իշխանության ղեկավարը: Փաստացի, տարբեր պետություններում օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ Խորհուրդը նախագահում է կա՛մ վարչապետը, կա՛մ նախագահը, իսկ Իտալիայի պարագայում Խորհրդի ղեկավարության աստիճանակարգում ամրագրված է փոխնախագահի պաշտոնը, որն ի պաշտոնե զբաղեցնում է Նախարարների խորհրդի նախագահը՝ վարչապետը:

Քննարկվող համատեքստում մեզ համար առանցքային հետաքրքրություն է ներկայացնում նաև վրացական փորձը: Այսպես, 2018 թվականի դեկտեմբերի 16-ին Վրաստանում տեղի ունեցավ նորընտիր 5-րդ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլիի երդմնակալության արարողությունը, որից հետո Վրաստանը խառը կառավարման ձևից անցում կատարեց խորհրդարանականի: Ի թիվս այլնի, Վրաստանի Սահմանադրության նոր խմբագրությամբ, Ազգային անվտանգության խորհրդից զատ, ստեղծվեց Սահմանադրությամբ նախատեսված մի նոր մարմին՝ *Պաշտպանության ազգային խորհուրդ:* Այսպես, Վրաստանի Սահմանադրության **73-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝

«Ռազմական դրության ժամանակ ստեղծվում է խորհրդատվական մարմին՝ Պաշտպանության ազգային խորհուրդ, որը նախագահում է Վրաստանի Նախագահը: Պաշտպանության ազգային խորհրդի անդամներն են Վրաստանի Նախագահը, Վարչապետը, Խորհրդարանի նախագահը, Պաշտպանության նախարարը և Պաշտպանության ուժերի հրամանատարը: Վրաստանի նախագահի որոշմամբ Խորհուրդ կարող են հրավիրվել Խորհրդարանի և Կառավարության առանձին անդամներ: Պաշտպանության ազգային խորհուրդը գործում է մինչև ռազմական դրության չեղարկումը»[2]:

---

[1] *PRESEDINTELE REPUBLICII MOLDOVA DECRET Nr. 428-X privind constituirea Consiliului Național de Securitate՝ Մոլդովայի Հանրապետության Նախագահի թիվ 428-X դեկրետ Ազգային անվտանգության խորհրդի ձևավորման մասին, https://presedinte.md/app/webroot/Decrete/428-n.pdf [30/11/2025]:*

[2] *https://matsne.gov.ge/ru/document/view/30346?publication=35 [30/11/2025]:*

Հանրապետության Նախագահը՝ որպես Պաշտպանության ուժերի գլխավոր հրամանատար[1], նախագահում է ստեղծված ժամանակավոր խորհրդատվական մարմինը: Մինչդեռ, բացի Պաշտպանության ազգային խորհրդից, Վրաստանում գործում է Ազգային անվտանգության խորհուրդ, որը նախագահում է Հանրապետության վարչապետը, իսկ Նախագահը վերջինիս անդամ չէ:

Վրացական Սահմանադիրը կարծես թե գնացել է լրիվ այլ, մեզ համար ակնհայտ անծանոթ ու նոր ճանապարհով:

Նախ՝ կարևոր է արձանագրել, որ Հանրապետության Նախագահը շարունակում է լինել պետության գլուխը[2], ավելին՝ նրան է վերապահված Պաշտպանության ուժերի Գլխավոր հրամանատարի տիտղոսը:

Երկրորդ՝ Զինված ուժերի կիրառման ընթացքում Հանրապետության Նախագահին վերապահվել են հստակ իրավունքներ և պարտականություններ:

Երրորդ՝ Հանրապետության Նախագահի գլխավորությամբ, վերջինիս սահմանադրական պարտականությունների պատշաճ ու լիարժեք կատարման նպատակով, առանձնացվել է Սահմանադրությամբ նախատեսված հատուկ մարմին՝ Պաշտպանության ազգային խորհուրդը: Մինչդեռ, ինչպես արդեն նշել էինք վերևում, Հանրապետության վարչապետը հանդիսանում է արտաքին հարաբերություններն ու ազգային անվտանգության բնագավառը համակարգող Ազգային անվտանգության խորհրդի նախագահը: Ի տարբերություն Պաշտպանության ազգային խորհրդի՝ Ազգային անվտանգության խորհուրդը մշտական գործող մարմին է:

Վերոգրյալի համատեքստում, զուգահեռներ անցկացնելով Հայաստանի Հանրապետությունում առկա կարգավորումների հետ, անհրաժեշտ ենք համարում արձանագրել հետևյալը: *Այսպես*, մի կողմից՝ 2015 թվականի խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահը հանդես է գալիս որպես **Պետության գլուխ՝** առանց ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության բնագավառում առանցքային լիազորությունների, վերջինս չի հանդիսանում Զինված ուժերի Գլխավոր հրամանատարը: Մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհուրդն իրենից քաղաքական որոշումներ կայացնող մարմին է ենթադրում[3]: Երրորդ կողմից էլ՝ անհրաժեշտ է տարանջատել Հանրապետության նախագահի կայացրած որոշումների բովանդակային և ձևական հարթությունները: Բովանդակային հարթությունում Հանրապետության

---

[1] *Վրաստանի Սահմանադրության 49-րդ հոդվածի 2-րդ կետը (անգլերեն պաշտոնական թարգմանություն)* ***The President of Georgia is the Supreme Commander-in-Chief of the Defence Forces of Georgia,*** *https://matsne.gov.ge/en/document/view/30346?publication=36 [30/11/2025]:*

[2] *Վրաստանի Սահմանադրության 49-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությունը (անգլերեն պաշտոնական թարգմանությունը)* ***The President of Georgia is the Head of the state of Georgia,***

https://matsne.gov.ge/en/document/view/30346?publication=36 [13/6/2025]:

[3] *«Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասը:*

նախագահը քաղաքական որոշում չկայացնող պետական պաշտոնյա է, քանի որ այս կամ այն պաշտոնում որևէ անձի նշանակումը, դիվանագիտական աստիճանի կամ զինվորական բարձրագույն կոչման շնորհումը չենք կարող բովանդակային առումով քաղաքական որոշում համարել, մինչդեռ ձևական առումով՝ այո՛, Հանրապետության նախագահը կայացնում է քաղաքական որոշում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս զուտ քաղաքական պաշտոն[1] զբաղեցնող պաշտոնատար անձ է:

Վերոգրյալի համատեքստում Հանրապետության նախագահը ոչ միայն չի կարող լինել Անվտանգության խորհրդի կամ վերջինիս համարժեք այլ մարմնի նախագահ, ինչպես Վրաստանի պարագայում[2], այլև չի կարող անգամ համարվել այդ մարմնի անդամ[3]:

Այս ամենի համատեքստում, կարող ենք արձանագրել հետևյալը.

Ըստ Խորհուրդը նախագահող պաշտոնատար անձի կարող ենք առանձնացնել՝

ա) **Խորհրդի նախագահական մոդել**. Անվտանգության խորհուրդ, որը նախագահում է Հանրապետության նախագահը.

բ) **Խորհրդի վարչապետական մոդել.** Անվտանգության խորհուրդ, որը նախագահում է գործադիր իշխանության ղեկավարը՝ վարչապետ, կառավարության նախագահ, նախարարների խորհրդի նախագահ.

գ) **Խորհրդի խառը մոդել.** Անվտանգության խորհուրդ, որը նախագահում է Հանրապետության նախագահը, սակայն գործադիր իշխանության ղեկավարն անմասն չի մնում Խորհրդի ղեկավարման և համակարգման գործողություններից:

Խորհուրդների տարբերակման հաջորդ հիմքը կազմն է:

Ուսումնասիրության արդյունքում և հիշյալ համատեքստում անհրաժեշտ է տարբերակել **սիմետրիկ և ասիմետրիկ** կազմեր ունեցող Խորհուրդներ:

Այսպես,

ա) Խորհուրդը **կազմով պարզ է**, երբ բաղկացած է բացառապես իրավահավասար անդամներից՝ *Անվտանգության խորհրդի անդամներից*: Օրինակ՝ Միացյալ թագավորություն, Հայաստանի Հանրապետություն և այլն:

բ) Խորհուրդը **կազմով բարդ է**, երբ բաղկացած է հիմնական և ոչ հիմնական՝ այլ, անդամներից: Օրինակ, Ռուսաստանի Դաշնություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և այլն:

Խորհուրդների կազմերի տարբերակման համատեքստում կարևոր է նաև տարանջատել ըստ Խորհուրդների անդամների սահմանադրաիրավական կարգավիճակի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մշտապես քննարկման

---

[1] *«Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը // ՀՕ-206-Ն, ընդունված 23.03.2018 // ՀՀՊՏ 2018.03.29/24 (1382) հոդ.399:*

[2] *Վրաստանի 5-րդ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, գործող կարգավորումների համաձայն, վերջին Նախագահն է, որն ընտրվեց ժողովրդի կողմից ուղիղ քվեարկության միջոցով:*

[3] *Ի տարբերություն մի շարք այլ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհուրդը չի նախատեսում մշտական կամ ոչ մշտական անդամի կարգավիճակ:*

առարկա է այն հարցը՝ արդյոք Խորհրդի անդամները պետք է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներ լինեն, թե՝ ոչ, հիշյալ պարագայում անհրաժեշտություն է առաջանում տարբերակել, որ այս համատեքստում Խորհուրդը կարող է լինել **պարզ, բարդ և խառը:**

ա) Իր էությամբ Խորհուրդը պարզ է, երբ կազմված է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներից.

բ) Իր էությամբ Խորհուրդը բարդ է, երբ որպես Անվտանգության խորհրդի անդամներ ներկայանում են ոչ միայն գործադիր իշխանության ներկայացուցիչները, այլև պետական իշխանության այլ ճյուղերի ներկայացուցիչները.

գ) Իր էությամբ Խորհուրդը խառն է, երբ որպես հիմնական անդամ հանդես են գալիս գործադիր իշխանության ներկայացուցիչները, սակայն պետական կառավարման համակարգի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները կա՛մ կարող են հրավիրել մասնակցելու Խորհրդի նիստերին, կա՛մ էլ համարվում են անվտանգության խորհրդի այլ անդամներ:

Վերը նշված պետությունների Խորհուրդների ուսումնասիրությունից արձանագրում ենք, որ չկա միասնական մոտեցում անգամ այն հարցում, թե ի վերջո իրավական ինչ ակտով պետք է հիմնվի Խորհուրդը: Մի դեպքում Խորհուրդը կազմավորվում է Սահմանադրությամբ, իսկ այլ դեպքում՝ օրենքով նախատեսված կարգով: Այս պարագայում կարող ենք առանձնացնել **ա) Խորհուրդ՝ կազմավորված Սահմանադրությամբ և բ) Խորհուրդ՝ կազմավորված օրենսդրությամբ:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ կարող ենք ամբողջացնել Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի մոդելավորման հետևյալ չափանիշները: Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհուրդները կարող ենք դասակարգել.

1. ըստ կազմավորման փաստաթղթի լինում են՝ *ա) Սահմանադրությամբ և բ) Օրենսդրությամբ նախատեսված.*
2. ըստ նախագահող սուբյեկտի՝ *ա) նախագահական, բ) վարչապետական և գ) խառը.*
3. ըստ կազմի՝ *ա) սիմետրիկ և բ) ասիմետրիկ.*
4. ըստ անդամների սահմանադրաիրավական կարգավիճակի՝ *ա) պարզ, բ) բարդ և գ) խառը:*

Ուսումնասիրության համատեքստում անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ.

Գլխավոր հրամանատարը **քաղաքացիական** բարձրագույն պաշտոնատար անձ է, որին հիշյալ տիտղոսը տրվում է պաշտոնավարման ողջ ընթացքում, իսկ Գերագույն հրամանատարը՝ **ռազմական** բարձրագույն պաշտոնատար անձ, որը, որպես կանոն, ժամանակավոր է նշանակվում այդ պաշտոնում: Այս պարագայում, անհրաժեշտ ենք համարում Հայաստանի Հանրապետության վարչապետի համար

Սահմանադրությամբ նախատեսված Գերագույն հրամանատար տիտղոսը խմբագրել՝ Գլխավոր հրամանատարի:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 5-ի փոփոխություններով) // ՀՀՊՏ 2015.12.21 // Հատուկ թողարկում Հոդ. 1118:
2. La Constitution De La Cinquième République (Ֆրանսիայի 5-րդ Հանրապետության Սահմանադրություն՝ ընդունված 1958 թվականին):
3. Constitution of the Federative Republic of Brazil 3rd edition Constitutional text of October 5, 1988, with the alterations introduced by Constitutional Amendments No. 1/1992 through 64/2010 and by Revision Constitutional Amendments No. 1/1994 through 6/1994.
4. Վրաստանի Սահմանադրություն (ընդունված 1995 թվականի օգոստոսի 24-ին):
5. Լիտվայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 1992 թվականի հոկտեմբերի 25-ին):
6. Մոլդովայի Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 1994 թվականի հուլիսի 29-ին) // 13-11-2024 в Monitorul Oficial № 466 статья № 635:
7. Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն (ընդունված 1993 թվականի դեկտեմբերի 12-ի համաժողովրդական քվեարկությամբ):
8. Իտալական Հանրապետության Սահմանադրություն (ընդունված 1947 թվականի դեկտեմբերի 22-ին):
9. Constitution of the Republic of Belarus of 1994 (with changes and additions adopted at the Republican referenda of November 24, 1996, of october 17, 2004 and February 27, 2022.
10. «Հանրային ծառայության մասին» օրենք // ՀՕ-206-Ն, ընդունված 23.03.2018 // ՀՀՊՏ 2018.03.29/24 (1382) Հոդ.399:
11. National Security Act of United States of America, 1947.
12. Федеральный закон от 28.12.2010 N 390-ФЗ (ред. от 10.07.2023) "О безопасности".
13. National Security Law of Latvia // Latvijas Vēstnesis, 473/476, 29.12.2000.; Latvijas Republikas Saeimas un Ministru Kabineta Ziņotājs, 3, 08.02.2001.
14. Code of military regulations of Italy, Legislative Decree 15 March 2010, n. 66
15. PREŞEDINTELE REPUBLICII MOLDOVA DECRET Nr. 428-X privind constituirea Consiliului Național de Securitate.

Էլեկտրոնային ռեսուրսներ

1. Cambridge Dictionary: Cambridge University Press & Assessment // https://dictionary.cambridge.org/dictionary/english/commander-in-chief [30/11/2025]:
2. Commander-in-Chif եզրույթի բացատրությունը, Collins English Dictionary // https://www.collinsdictionary.com/dictionary/english/commander-in-chief [30/11/2025]:
3. Commander-in-Chief եզրույթի բացատրությունը // https://www.ebsco.com/research-starters/political-science/commander-chief [30/11/2025]:
4. Supreme Commander եզրույթի բացատրությունը, Cambridge Dictonary: Cambridge University Press & Assessment // https://dictionary.cambridge.org/example/english/supreme-commander [30/11/2025]:
5. Supreme Commander եզրույթի բացատրությունը, Collins English Dictionary // https://www.collinsdictionary.com/dictionary/english/supreme-commander [30/11/2025]:
6. Conselho de Defesa Nacional // https://www.gov.br/gsi/pt-br/assuntos/seguranca-institucional/conselho-de-defesa-nacional? [30/11/2025]:

ПРОБЛЕМЫ КРИТЕРИЕВ КЛАССИФИКАЦИИ (МОДЕЛИРОВАНИЯ) СОВЕТА БЕЗОПАСНОСТИ ИЛИ СОВЕТА НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Аннотация

Цель исследования заключается в выявлении, представлении и обосновании возможности моделирования - классификации - на основе чётко сформулированных критериев в контексте разграничения Советов безопасности и Советов национальной безопасности. Примечательно, что в теории конституционного права, например, различаются англосаксонская, континентальная и смешанная модели конституционной юстиции - по наличию или отсутствию специализированного органа, осуществляющего конституционный контроль, его конституционно-правовому статусу, особенностям полномочий и т.д. Однако в данном контексте отсутствуют объективные критерии, по которым можно было бы классифицировать Советы безопасности или Советы национальной безопасности.

Например, Советы безопасности или Советы национальной безопасности могут классифицироваться по их природе, председательствующему в них субъекту, составу, порядку формирования и по другим критериям. Учитывая тот факт, что ни теория, ни практика не выработали чётких подходов относительно необходимых критериев для классификации Советов безопасности, возникла необходимость провести

исследование преимущественно с использованием сравнительно-правового метода, поскольку необходимо выявить, каким образом формируются Советы безопасности, а также какой статус и состав они имеют.

Ключевые слова: Совет национальной безопасности, Совет безопасности, модель, национальная безопасность, Верховный главнокомандующий, Главнокомандующий, теория национальной безопасности.

FUNDAMENTAL ISSUES OF THE CRITERIA FOR MODELING (CLASSIFYING) THE SECURITY COUNCIL

Annotation

The purpose of the study is to reveal, present, and substantiate the possibility of modeling-classification, based on clearly formulated criteria in the context of distinguishing between Security Councils and National Security Councils. It is noteworthy that in constitutional law theory, for example, we distinguish between Anglo-Saxon, continental, and mixed models of constitutional justice, based on the existence or absence of a specialized body administering constitutional review, its constitutional-legal status, peculiarities of competence, and so on. However, in this context, no objective criteria exist by which Security Councils or National Security Councils may also be classified.

For instance, Security Councils or National Security Councils may be classified according to their nature, the authority presiding over them, their composition, the procedure for their formation, and other criteria. Considering the fact that neither theory nor practice provides clear approaches regarding what criteria are necessary to classify Security Councils, it became necessary to conduct the research primarily through the comparative legal method, since it is essential to identify how Security Councils are formed, and what status and composition they have.

Keywords: National Security Council, Security Council, model, national security, Supreme Commander, Commander-in-Chief, national security theory.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 05.12.2025 թ., տրվել է գրախոսության 05.12.2025 թ., ընդունվել է տպագրության 15.12.2025 թ.: